ստանալի օգուտը անհուն, վասն զի մենք փոխանակ մի կամ երկու թղթակից պահելու Եւրոպայում, կունենանք մի ամբողջ օրգան փարիզում. եւրոպացւոց մեծ լրագիրները քաղուածք անելով նրանից իրանց հասարակութեանց ճիշտ գաղափար կը հաղորդեն Հայաստանի թշուառ բնակիչների անմխիթար դրութեան մասին»։

Հայոց ազգը, այդ բարեբաստ, աշխարհի երեսին բացառութիւն կազմող ազգը, չը գիտեմ թէ ինչ բաղդաւոր աստղի տակ է ծնած. երբ յոյները հարիւր հազարներ են վատնում, մեզ հայերիս համար, բաւական է որ 200—400 բաժանորդ գրվենք պ. Դիւլօրիէի լրագրին ու կեանքի ամենայն բարութիւնները վայելենք, անհուն օգուտներ քաղենք...խեղճ յոյներ, երանելի հայեր։ Բայց այս անգամ ես կը ցանկանայի յոյն լինել, որ իմ ազգը իր ժամանակին հարիւր հազարներ վատնէր իր ձգտումները իրագործելու համար և ոչ հայ, որ այսպիսի մի ճգնաժամում, որի մէջ է փոքր-Ասիան, աչքս անկէի ու սպասէի երբ պիտի պ. Դիւլօրիէն սկսի իր վրա ընդունած գործը, որից անհուն օգուտներ քաղէր իմ ազգը... Մենք չենք հերքում՝ պ. Դիւլօրիէի լրագրի պէս մէկ լրագիր անհրաժեշտ է հային. աւելացնում ենք՝ հարկաւոր էր, հարկաւոր է այժմ և հարկաւոր կը լինի ապագայում, բայց մի և նոյն ժամանակ պիտի ասենք՝ թէ լոկ այդ միջոցը բաւական չէ հայոց խնդրի պրօպագանդայի համար։ Եթէ հարկաւոր է մեզ պ. Դիւլօրիէի լրագիրը, ոչ պակաս հարկաւոր են մեզ թղթակիցներ որպէս Հայաստանում, նոյնպէս և Եւրոպայում, հարկաւոր են, եթէ կարելի լինի հիմնել բաժիններ «Temps» և ուրիշ լրագիրներում. ինչպէս առաջարկում է պ. Սաղաթելեանը. մէկ խօսքով՝ հարկաւոր է և մեզ հարիւր հազարներ վատնել, որ հայի դատը լսի Եւրոպան... Մեծ յոյսեր դնել պ. Դիւլօրիէի օրգանի վրա օպտիմիստութիւն է, ի նկատի ունենալով որ այդ լրագրի հիմնական ֆոնդը 200—400-ի բաժանորդագինն է լինելու։ Սա մի այնպիսի գումար է որ ոչ թէ իր սեպհական թղթակիցները կարող է ունենալ, այլ նրա գրաշարներն անգամ պիտի քաղցամահ լինեն։ Քաղաքական հարցերով պարապող լրագրի պահանջները մեծ են և այսպիսի չնչին գումարը նրա հիմնական ֆոնդ չէ կարող լինել, և ճշմարիտը ասենք՝ մենք չենք կարծում որ պ. Դիւլօրիէն այս հազարով պիտի պարապվի։ Այստեղ մի տարակուսութիւն կայ... Կարելի է յարգելի արեւելագէտը ուզում մի մի մասնաւոր հայոց օրգան ունենալ, որտեղ կարելի լինի հայոց վերաբերմամբ գիտական հարցերով պարապել— այդ ուրիշ բան է, բայց թէ հայոց խնդրին այս և այն ընթացքը տալու համար բաւական չեն ոչ թէ 400-ի բաժանորդագինը, այլ և հազարինը... բաւական չէ միայն պ. Դիւլօրիէի աշխատանքը. նրան հարկաւոր են աշխատակիցներ, գրականութեան մէջ անուն ունեցող գրողներ, թղթակիցներ և ուրիշ այն ամենը, ինչ որ կեանք է տալիս մի ականաւոր խմբագրութեանը։ Մէկ մասնաւոր գիտական լոկ իր այժով խմբագրութիւն չէ կարող ներկայացնել, ինչպէս մէկ ծիծեռնակ դեռ գարուն չէ գուշակում...

Չը լինի թէ հարիւր հազարներ վատնող յոյները վերջ ի վերջոյ ասէին երջանիկ հայերին, որոնք պ. Դիւլօրիէի լրագրից անհուն օգուտներ պիտի քաղեն,—Sic vos non vobis! (դուք էք, բայց ձեզ համար չէ)։

Գաս. Եաղուբեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յուլիսի 12-ին

Ցայտնի է որ Շուշու հայոց հոգեւոր դպրոցը ունէր մեծ հողային կալուածներ, մօտաւորապէս 200 հազար դեսեատին չափով։ Այդ հողերի կէսը անցաւ մասնաւոր անձերի ձեռքը և կատարելապէս կորաւ դպրոցի համար։ Այժմ դպրոցը ունի պահած այդ կալուածների կէսը, մօտ 100 հազար դեսեատին հող։ Բայց հոգաբարձուները ոչինչ արդիւնք չեն ցոյց տալիս այդ անագին հողերից։ Ի՞նչպէս է լինում այդ,—չը գիտեմ։ Միայն գիտեմ, որ դպրոցը կառավարվում է շատ անհաստատ արդիւնքներով՝ ծխագրամով, պակագրամով, մոմավաճառութեան և այլ եկամուտներով։ Շուշու երկու դպրոցները՝ արականը և իգականը այսպիսով կառավարվում են ընդամենը 8000 բուբլ արդիւնքով, այն էլ շատ անհաստատ արդիւնքով։ Այն ինչ այդ երկու դպրոցները կառավարելու համար հարկաւոր է առ նուազն 11,000 բուբլ տարեկան եկամուտ։

Բայց շուշեցիները, որոնք շատ առատաձեռն են, երբ հարկաւոր է օգնել բէալական գիմնազիային, կամ քաղաքային օրիորդական դպրոցին, մի երեք հազար բուբլ իրանցից չեն կամենում աւելացնել, որպէս զի իրանց ազգային դպրոցներն ապահովեն։

Շուշեցիները շատ ընդունակ մարդիկ են, առհասարակ, լաւ խօսողներ են, առ երես ազատամիտ են, խօսքով ամեն գործին պատրաստ են,—բայց հէնց որ խօսքը գործ պիտի դառնայ, բոլորն էլ յետ են քաշվում.... Շուշեցին միայն այն գործին ձեռք կը տայ, որտեղ չահ կայ, կամ փառք։ Նա օգնում է պետական դպրոցին ոչ թէ որովհետև հասկանում է թէ ուսումը լաւ բան է, որ ուսման գործին օգնելը, ինչ լեզուով էլ կատարվի նա, գովելի գործ է,—ոչ, այլ միայն այն պատճառով որ պետական իգական դպրոցին, կամ բէալական գիմնազիային գումար զոհելով, նա կարող է պատուաւոր հոգաբարձու դառնալ, մենդիր կրել, գուցէ աստիճան և պատուանշան ստանալ։ Իսկ հայոց դպրոցին օգնելով նա ոչինչ չահ չունի։

Լինում է ժողով հայոց դպրոցի մէջ. կը հաւաքվեն, կը խօսեն, ոչինչ չեն անի և կը ցրվեն։ Մի և նոյն օրը, մի և նոյն անձինք կանչված են բէալական դպրոցին նիւթական նպաստ հասցնելու համար. նոյն հայերը մի քանի ժամվայ մէջ հազարներ կը հաւաքեն իրանց մէջ և կը ներկայացնեն բէալական դպրոցի վարչութեանը։

Հայի այդ հանելուկ կազմող բնաւորութեան մասին դուք ինքներդ ինչ կամենաք դատողութիւն արէք։

* * *

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 յուլիսի

Որքան որ աւելորդ է հոգեւորականների վերաբերեալ յօդուածներով լցնել ձեր պատուական թերթերի էջերը, որովհետև հարկ եղածը խօսած էք, բայց և այնպէս հետեւեալ զարմանալի դէպքի մասին լռել անկարելի համարելով, խնդրում եմ խոնարհաբար, պ. խմբագիր, բարեհաճէք տպել հետեւեալը։

Ներկայ յուլիս ամսոյս 5-ին, կիրակի օրը կատարվելու էր քաղաքացի Եագօր Նաֆտիկեանցի պսակի խորհուրդը Թէլէթի սուրբ Գէորգ եկեղեցում։ Փեսայի կողմից Մողնու Տէր Արիստակէս աւագ քահանան էր, իսկ հարսի քահանան էր Ծ ղ ն է թ և Մցխեթ գիւղերի Սարգիս քահանայ Երիցեանց, ուստի և օր առաջ յիշեալ քահանայն տոմսակ ուղարկելով Ծ ղ ն է թ, հրաւիրում են անպատճառ կիրակի ներկայանալու հանդէսին կատարելու պսակի խորհուրդը տէր Արիստակէսի հետ։ Տէր Սարգիս հայրը ստանում է հրաւիրատոմսակը, շտապում է Թիֆլիս, և առաջին անգամ երբ որ տեսնում է Արիստակէս քահանային, հետեւեալ պատասխանը լսում է. «Տէր Սարգիս հայր, լգուր էք եկել նեղութիւն կրելով, որովհետև պսակվողներին ճանապարհ ձգեցի և իմ տիրացուիս էլ, առանձին տոմսակ գրելով այնտեղի քահանային, որ առանց արգելքի պսակէ, իսկ ես չը կարողացայ գնալ, պատճառ որ բարեկամներիցս մի հարուստ կին վախճանվել է Մանգլիսում, նրա բերելու և թաղելու կարգադրութիւնները պէտք է տեսնեմ.... Սարգիս քահանան իր ընկերի ճշմարիտ խօսքերին հաւատ ընծայելով, գնում է սուրբ Սարգիս եկեղեցի, և 1—2 ժամ մնում է իր բարեկամների մօտ։ Յանկարծ ճանապարհին կը պատահի պսակվողի բարեկամներից մինը, որ անմիջապէս շտապեցնում է տէր հօրը ասելով՝ «շուտ գնացէք, այսօր երկու մարդ ևս ուղարկեցին ձեր ետեից, ձեզ են մնում, որ գնան պսակվեն, շուտ արէք։ Խեղճ քահանան զարմանալով այս անցքի վրա, գործը ստուգելու մտքով դիմում է հարսնատուն, որտեղ, բոլորը զայրացած տէրտէրի ուշանալուն, պատրաստված են գնալ և պսակվել։ Փեսայի խռովեալ խօսքերին, Սարգիս քահանան առում է «սիրելի, ինձանից ինչու էք ցաւում. ձեր ծխատէր Արիստակէս աւագ քահանան ինձ խնդրեց հեռացնել ուղելով» և սկսում է պատմել պատահածը։ Այդ ժամանակ գալիս է Արիստակէս քահանան և տեսնելով, թէ իր արարքը յայտնվել է, սատիկ չփոթվում է։ Այսքանը բաւական է նրան զգուշացնելու համար, որ միւս անգամ իր օգտի համար չը խաբի միամիտներին և մի և նոյն ժամանակ նրանց մնդաւոր չը դուրս բերի։

Հանդիսական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Порядокъ» լրագրին գրում են Թիֆլիսից որ իշխան Եագօն Թումանով պայման է կապել կառավարութեան հետ արդիւնահանել Սև ծովի ափում գտնված հարուստ անտառները, որոնք միակ ամբողջ կովկասում կարող են հայթայթել նաւաշինութեան համար պիտանի փայտ։ Թղթակիցը ասում է որ իշխան Թումանով այդ շահաւէտ գործից պայմանադրված ժամանակամիջոցում կը ստանայ 62 միլիոն փող, իսկ կառավարութիւնը կունենայ այդ արդիւնահանութիւնից ընդամենը մի 3 միլիոն բուբլ։ Բայց պայմանադրված ժամանակամիջոցից յետոյ կառավարութիւնը կունենայ զուտ վնաս, որովհետև կը ջրկվի մշտապէս ամենագեղեցիկ անտառից, որի տեղ կը մնան ծառերի մի քանի բուներ, լուռ, բայց ճարտարախօս վկաներ մեր երկրի վատնած և յափշտակած բնական հարստութեան։ Մեր բոլոր անտառները այնպէս էլ ոչնչացրած են, այժմ վերջինն էլ կոչնչանայ, օգուտ չը տալով պետութեանը, բայց հարստացնելով մասնաւոր անձի գրպանը։

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Վասպուրականի չորս վանքերի գործակատարներ՝ Անանիա վարդապետ Շիրոյեանց և Մեսրովբ վարդապետ Մոկացեան յիշեալ վանքերի սեփականութիւն կազմող Թիֆլիսի դուքանների գործակալ պ. Եագօր Յարութիւնեանցի հետ հաշիւ տեսնելով, հետեւեալ անդորրագիր տուած են իրեն։ «Վասպուրականի չորս գլխաւոր վանօրէից՝ Լիմ և Կտուց անապատաց, Վարագայ և Նարեկայ մենաստանաց տեղւոյս կալուածոց գործակալ մեծ. Եագօր աղա Յարութիւնեանցի հետ հաշիւ տեսնելով, որ կը սկսի 1876 յուլիսի 1-էն և կը տեւէ մինչև 1881 յուլիսի 1-ը, ամբողջ հինգ տարի, յիշեալ հինգ տարուան շրջանում կալուածներէն գոյացեալ արդեանց ամբողջ գումարը եղաւ 4191 բուբլ 50 կոպէկ։ Մեծ. գործակալի ձեռքով սոյն շրջանի մէջ յիշեալ կալուածոց վրա եղած ընդհանուր ծախուց գումարն է 681 բուբլ 90 կոպ. եկամուտից գումարէն զեղջելով՝ կը մնայ 3509 բուբլ 60 կոպ.։ Սոյն փողերն ամուլ չը պահելու համար հետզհետէ Բանկի 20 հատ բիլէթ առնելով՝ 136 բուբլ, 67 կոպ., չահեցուցած էր։ Սոյն գումարն ևս 3509 բ. 60 կոպ. գումարին հետ միանալով՝ ամբողջական գումարն կը լինի 3646 բուբլ 27 կոպ., զոր լիովին ստանալով, կը տամք սոյն անդորրագիրն մեծ. Եագօր աղա Յարութիւնեանցին ի միամտութիւն։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Նուխու անտառապետ պ. Եպիսկոպոսեանը, մի քանի անգամ հրաւիրագրեր է ուղարկում տեղական հայ հասարակութեան ներկայացուցիչներին, որ գումարվեն իր մօտ ուսումնարանի մասին հոգալու և նրան ապահովացնելու համար։ Բայց ուսումնարանի կրօնաւոր տէր-Սիմէօնը ծածուկ դրդում է ժողովրդեան չը դնալ, որովհետև եթէ ուսումնարանը բարեկարգվելու լինի, անպատճառ տէր-Սիմէօնին և նրանից անբաժան տիրացու Համբարձումին կը հեռացնեն դպրոցից, իսկ այժմ բացի այդ երկու անբաժաններից ոչ ոք ուսումնարան իրաւունք չունի մտնելու։»

—

ԱՐՏՈՒԻՆԻՑ մեզ գրում են։ «Մեր հայ-կաթոլիկ եպիսկոպոս Զաքարեան, որ հայի հետ հայ, վրացու հետ վրացի, թուրքի հետ թուրք է, արդէն սկսել է փորձեր անել հայ-կաթոլիկ եկեղեցու մէջ մտցնել արարողութիւններ և աւետարանի ընթերցմունութիւնը վրացերէն լեզուով։ Նրա և մեր միւս հոգեւորականների նպատակն է թշնամութիւն սերմանել հայ-կաթոլիկների և հայ-լուսաւորչականների մէջ, հայ-կաթոլիկ հոգեւորականների սովորութիւնն է գերխաւորապէս ազդել կանանց վրա, օգուտ քաղելով նրանց նախապաշարմունքից և մոլեռանդութիւնից։ Արտաքուստ նրանք իրանց հայ ազգութեան պատկանող են ասում, բայց գաղտնի կերպով հրահանգներ են տալիս հայ-կաթոլիկներին մեր հայ-լուսաւորչականների եկեղեցիների չէմքից էլ չանցնել։ Հակառակ դէպքում նրանք նզոված կը համարվեն։ Այդ հրահանգների նպատակն է արգելք լինել ազգային կապերի հաստատելուն մի ընտանիքի անդամների մէջ։ Բայց բաղդաւորապէս Արտուինի հայ-կաթոլիկների մէջ կայ արդէն լուսաւորված երիտասարդների մի խումբ, որ հասկանում է թէ կարելի է հաւատարիմ մնալով իր կրօնին, եռանդոտ կաթոլիկ էլ մնալով, լինել մի և նոյն ժամանակ հայ։ Նրանք սկսում են հասկանալ թէ հոգեւորականները կրօնի անունով ջանում են քանդել ազգութիւնը, թէ առանց այդ տեսակ հոգեւորականների էլ կարելի է մնալ կրօնով կաթոլիկ, բայց ազգութեամբ հայ լինել։»

—

Մեզ հաղորդում են ԲԱԳՈՒԻՑ հետեւեալը։ «Նաւթի գործարանատէրերից միմիայն չվեցցի Նոբէլն է, որ ճշմարիտ կարող է անուանվել գործարանատէր և արդիւնաբերող, այդ բառի բուն նշանակութեամբ։ Նրա մօտ ամեն բան եւրոպական կերպով է սարքած, նա խնայող և հաշուող է որտեղ հարկաւոր է, բայց առատաձեռն է, որտեղ այդ պահանջում է իր շահը և գործի աջողութիւնը։ Իսկ հայ գործարանատէրերը միշտ անտեղի հաշուող, անտեղի խնայող են, կամ աւելի լաւ է ասել ժլատ են, ինչքան էլ հարուստ լինեն, միշտ գործ են ածում հին ձևերը, մի և նոյն ժամանակ թոյլ են տալիս որ նրանց գործակատարները օրինաւոր կերպով գողանան։ Հաշված, օրինաւոր կերպով, խելացի մտքեսութեան վրա հիմնվելով հարստանալ՝ հայը չէ իմանում և չէ սիրում. նա հարստանալու համար գիտէ միայն մի ճանապարհ՝ խարդախութիւն և խաբէութիւն։ Բագուի բոլոր հայ գործարանատէրերի գործը միասին վերառած չարժէ մի Նոբէլի արած գործը։ Այժմ ամենքը այդ չվէդացուց են կախված. Բագուի հանանգի վաճառանվող ամբողջ նաւթի քանակութեան կէսը Նոբէլն է վաճառանում։ Նա ունի իր սեփական տէլեֆոն, երկաթուղու իր սեփական վագոններ, կասպից ծովի և Վոլգա գետի վրա իր սեփական նաւեր։ Իսկ հայերը չարունակում են իրանց արդիւնահանութիւնը մինչև այժմ ամենահին ձևերով, անդադար կրկնելով՝ ինչ հարկաւոր է զուր ծախսեր անել նոր ձևեր մտցնելու համար, այդպէս էլ եօլլա կերթանք։ Եւ քանի որ օտարազգին հարստանում է,—հայերը հետզհետէ քանդվում են։»

—

Շնորհակալութեամբ ստացանք այս օրերս Թիֆլիսում հրատարակված մի վրացերէն գրքոյկ, որ պարունակում է իր մէջ իշխան Ալէքսանդր Զավչավաձէի բանաստեղծութիւնները։ Նա ներկայ դարի առաջին քառորդի յայտնի վրաց բանաստեղծ էր։ Գրքոյկի մէջ կայ և մի բանաստեղծութիւն որ նուիրած է մեր հայոց հնութիւնների փառաբանելուն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՖՐԱՆՍԻԱ

Հանրապետութեան թշնամիները Ֆրանսիայի մէջ օգուտ են քաղում Ալժիրիայի գործերի ընթացքից հանրապետական կառավարչական եղանակի վրա յարձակվելու համար։ Եթէ հաւատանք բօնապարտեաններին և միապետականներին, Ալժիրիայի և Ցունիսի մէջ ապստամբութիւնները վաղուց ճնշված կը լինէին, եթէ Ֆրանսիայի կառավարչական ձևը միապետական լիներ։ Թագաւորը կամ կայսրը մի լոպէ չէին պահի գենիրալ Ֆարրի նման պատերազմական մինիստրին։ Հիւսիսային Աֆրիկա կուղարկվեր մի երևելի մարշալ, օրինակ կօնրոբեր կամ Մակ-Մահօն և ապստամբութիւնը անյապաղ կը ճնշվեր։ Ֆրանսիական միապետականների կարծիքով միայն միապետութիւնը կարող է ստեղծել ընդունակ միտիստրներ և զինուորականներ, որովհետև նա գնահատում է ամեն տեսակ տաղանդ, մանաւանդ պետական և պատերազմական։

Անկարելի է հերքել որ յարձակումները այժմեան պատերազմական մինիստրի վրա մասամբ իրաւացի են։ Մինչև անգամ հանրապետականները խոստովանում են, որ